

**ՀԱՅ ԵՎ ՌՈՒՍ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ
ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՍՈՑԻՈՄՇՆԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՍՊԵԿՏ**

*Ավանեսյան Հ.Մ., Ասրիյան Է.Վ., (ԵՊՀ, Երևան, Հայաստան)
avanesyanh@ysu.am, elina.asriyan@ysu.am*

*Սամոխվալովա Ա.Գ. (Կոստրոմայի պետական համալսարան, Կոստրոմա,
Ռուսաստան)
samohvalova@kmtn.ru*

Ներկայացման ամս.՝ 02.09.2019

գրախոսման ամս.՝ 03.09.2019

տպագրության ընդունման ամս.՝ 17.09.2019

Հոդվածում ներկայացված են Հայաստանում և Ռուսաստանում բնակվող դեռահասների հաղորդակցական բարդությունների միջմշակութային հետազոտության արդյունքները: Բացահայտված են օնտոգենեզի դեռահասության փուլին բնորոշ ընդհանուր տարիքային հաղորդակցական բարդությունները, ինչպես նաև՝ հայ և ռուս դեռահասների տարիքային և սեռային, սոցիալ-մշակութային հաղորդակցական բարդությունները:

Հաշվի առնելով հետազոտության մասնակիցների շփման իրավիճակների համատեքստը, նկարագրված են այն բարդությունները, որոնք առաջանում են մեծահասակների և հասակակիցների հաղորդակցման գործընթացում:

Հանգուցային բառեր՝ *դեռահաս, շփում, հաղորդակցական բարդություններ, սոցիալ-մշակութային միջավայր, միջմշակութային փարբերություններ:*

Վերջին տարիներին դեռահասների և երեխաների հաղորդակցական բարդությունների հիմնախնդիրը բազմաթիվ տեսական և կիրառական հետազոտությունների առարկա է դարձել: Սակայն, դեռահասների հաղորդակցման բարդությունների խնդիրը դիտարկելիս մեր հետազոտական խմբի կողմից կարևորվում է խնդրի ուսումնասիրման սոցիոմշակութային համատեքստի դերը: Նման մոտեցումը թույլ է տալիս բացահայտել այդ բարդությունների դետերմինանտները, յուրահատկությունը, ինչպես նաև դեռահասի կողմից այդ բարդությունների սուբյեկտիվ ապրումները և դրանց հաղթահարումը այն ազգային, մշակութային և կրթական համատեքստում, որում և տեղի է ունենում նրա սոցիալականացումը: Մշակույթի ազդեցությունը անձի վրա սովորաբար ուսումնասիրվում է սոցիալական վարքաձևերի մշակութային յուրահատկությունների ուսումնասիրման միջոցով:

Մշակույթը ներառում է վարքի համար պատասխանատու հիմնարար տարրերի շարք, որոնցից շատերը դրսևորվում են միասին՝ ձևավորելով համոզմունքների, նորմերի, արժեքների, վարքաձևերի մոդելներ, որոնք կոչվում են «սոցիալական վարքի տարրական ձևեր» (Fiske, 1992): Նման տարրական ձևերը, միավորվելով, ձևավորում են մշակութային սինդրոմներ՝ օր. կոլեկտիվիզմ կամ ինդիվիդուալիզմ:

Մշակութային սինդրոմները, իրենց հերթին, ձևավորվում են կլաստերներ, ինչպիսին են ավանդապաշտությունը կամ նորարարությունը (Inkeles, Smith, 1974): Ամեն մշակութային առկա են սոցիալական վարքի կազմակերպման համար սուբյեկտիվ մշակութային տարրերի միավորման յուրահատուկ միջոցներ: Վարքի մասին նման հիմնական պատկերացումներն են՝ հիերարխիա, հավասարություն, համապատասխանություն, որոնք սահմանում են Ֆիսկեի կողմից և առանձնացվում Դ. Բերրիի և Գ. Տրիանդեսի, Դ. Մայերսի կողմից իբրև սոցիոմշակութային սինդրոմ դիտարկվող վարքի տարրական ձևեր [4]: Անկախ այն փաստից, որ փոխազդեցության որոշ ձևերը ունիվերսալ են, յուրաքանչյուր մշակույթ սահմանում է ընդունելի և սպասելի սոցիալական վարքային ձևերը [7], որոնք վերաբերում են նաև միջանձնային հաղորդակցման իրավիճակներին: Անկասկած է, որ հաղորդակցման գործընթացում ի հայտ եկած բարդությունները փորձառություն է, որի հետ մարդիկ առնչվում են անկախ մշակույթից, ազգությունից և կրոնից: Սակայն տարբեր մշակույթների ներկայացուցիչները կարող են ունենալ այդ բարդությունների տարբեր մեկնաբանություններ և գնահատականներ: Երեխաների հաղորդակցման բարդությունների սոցիալ-մշակութային առանձնահատկությունների դիտարկմանը զուգահեռ, անհրաժեշտ է դիտարկել նաև համատեքստը, որում տեղի է ունենում հաղորդակցումը: Սոցիալական հոգեբանության մեջ համատեքստը դիտարկվում է իբրև գործոն, որը պայմանավորում է անձի վարքը կոնկրետ իրավիճակում (Գ.Մ Անդրեևա, Դ. Բիվին, Դ. Ջեկսոն, Ե. Լանգեր և այլք):

Կոնտեքստուալ ինտերակցիոնիզմի հայեցակարգում (Ն. Սմիթ), հոգեբանական իրադրությունը դիտարկվում է իբրև սուբյեկտի և օբյեկտի փոխազդեցությունը համատեքստում, որում ներառումը պետք է բացառի հոգեկան/միջավայր ընդդիմությունը: Հոգեբանության մեջ առկա է ամբողջ ուղղություն՝ կոնտեքստուալիզմ (Ռ. Լերներ, Դ.Մացամուտո, Զ.Կապարա, Դ.Սերվին, Դ.Ֆորդ և այլք), որը հիմնվում է այն գաղափարի վրա, որ հոգեկանը դետերմինավորված է սոցիոմշակութային կոնտեքստով: Հենց սոցիոմշակութային կոնտեքստուալիզացիան կարող է դառնալ այն բանալին, որը կօգնի հետազոտողին հասկանալ և մեկնաբանել սուբյեկտի վարքաձևերը հաղորդակցության բարդությունների իրավիճակում:

Հետազոտության կազմակերպում: Մեր կողմից կազմակերպվեց միջմշակութային հետազոտություն, որի նպատակն էր հետազոտել հայ և ռուս դեռահասների հաղորդակցման բարդությունների միջմշակութային տարբերությունները: Ենթադրվում էր, որ տարբեր մշակութային պայմաններում ապրող դեռահասների հաղորդակցական բարդություններում գոյություն ունեն միջմշակութային տարբերություններ: Հետազոտությանը մասնակից դարձան 280 դեռահաս, որոնցից 140 հայ և 140 ռուս. Յուրաքանչյուր ազգային խումբ ներառում էր արական ($n = 69$) և իգական սեռի ($n = 71$) ներկայացուցիչներ, որոնք ներկայացրել են նաև տարբեր տարիքային խմբեր՝ 14–15 (8 դասարանի, 31 տղա և 35 աղջիկ) և 16–17 տարեկան (10–11 դասարանցիներ, 38 տղա և 36 աղջիկ): Հետազոտությունը անց էր կացվել Ա. Գ. Սամոխվալովայի «Մեծահասակների և հասակակիցների հետ հաղորդակցման

բարդությունները» մեթոդիկայի օգնությամբ [9], Հայաստանյան հետազոտության համար տվյալ մեթոդիկան ադապտացվել էր ԵՊՀ Փորձարարական հոգեբանության լաբորատորիայի ջանքերով՝ հ.գ.դ. Ավանեսյանի և հ.գ.թ. Ասրիյանի կողմից: Տվյալների վիճակագրական մշակումը կատարվել էր SPSS Statistics V.19.0 ծրագրային փաթեթի միջոցով (U-критерий Манна-Уитни):

Հայ և ռուս դեռահասների հաղորդակցական բարդությունների տարբերությունները ըստ Մաննա-Վիթնիի U-չափանիշի արձանագրել են 14-15, 16-17 տարեկան տղա և աղջիկ դեռահասների մոտ մի շարք բաղադրիչների միջև, ինչպիսին են՝ ապրումակցման դժվարությունները, եսակենտրոնությունը, նախանձի դրսևորումը, կոնտակտի հաստատումը, նախանձը, նպատակադրումը, պլանավորումը, հուզական կախվածությունը, ներազդման միջոցի ընտրության բարդությունը և այլն (U գործակցի տարբերության հավաստիությունը տատանվում է $p=0,000,1$ - $p=0,008$):

Հետազոտության արդյունքների ամփոփումը ցույց է տալիս, որ տարբեր երկրների ներկայացուցիչներին հատուկ են ընդհանուր տարիքային հաղորդակցական բարդություններ, որոնք անկախ են սոցիոմշակութային համատեքստից և հաղորդակցման օնտոգենեզից: Դրանք հիմնարար հաղորդակցական բարդություններ են, որոնք պայմանավորված են անձի ինքնորոշմամբ և զարգացմամբ՝ էմպատիայի բարդություններ, էզոցենտրիզմ, անվստահություն, կոնտակտի կայացման բարդություններ, կոնֆորմիզմին հակվածություն, անկարողություն ընդունել սեփական մտքերը, ապրումներն ու ցանկությունները, նախանձ ավելի հաջողակ հասակակիցների հանդեպ և այլն:

Գոյություն ունեն հաղորդակցական բարդությունների միջմշակութային տարբերություններ տարբեր սոցիոմշակութային պայմաններում դաստիարակվող դեռահասների մոտ: Ռուսաստանյան դեռահասների համար մեծահասակների հետ հաղորդակցման իրավիճակում բնորոշ է նրանցից առանձնացվելու միտումը, ինքնուրույնությունը և ավտոնոմությունը, մեծահասակներից հուզական օտարվածությունը, դեմոնստրատիվ կամ կոնֆորմ վարքի հանդեպ միտումը, նրանք պատրաստ չեն մեծահասակից օգնություն ակնկալել, ցանկանում են թաքցնել սեփական ապրումները: Հայաստանյան դեռահասները ի տարբերություն դրան, մեծահասակի հետ մերձեցման միտում են դրսևորում, հարգանք են ցուցադրում և սպասում աջակցություն, նմանակում են նրանց վարքաձևերը, կողմնորոշված են նրանց գնահատականին: Տվյալ միտումը կապված է Հայաստանում ծնողների և երեխաների միջև ամուր հուզական կապեր կառուցելու ցանկության հետ, որոնք պետք է պահպանվեն նույնիսկ այն ժամանակ, երբ երեխաները կազմում են սեփական ընտանիքները: Հասակակիցների հետ շփման գործընթացում հայ դեռահասները ցուցադրում են «կոլեկտիվիստական մշակույթի» մոդելը, որը կողմնորոշված է գործողությունների համաձայնեցմանը, համագործությանը, փոխըմբռնմանը և ընդհանուր նպատակներին: Ռուս դեռահասները դրսևորում են անհատապաշտական մշակույթի ցուցանիշներ՝ դրսևորելով էզոցենտրիզմ, կոնտակտի ձեռքբերման

բարդություն, գործողությունների համաձայնեցվածության բարդություն, աննախա-
ձեռնողականություն, անհատական շահույթի հետապնդում:

Հաղորդակցական բարդությունները դեռահասության փուլում ունեն ամբիվա-
լենտ դեր՝ դրանց գիտակցման և կոնստրուկտիվ հաղթահարման դեպքում տեղի են
ունենում հաղորդակցվող սուբյեկտի զարգացման պոզիտիվ միտումներ և հակառա-
կը՝ դեռահասի անկարողությունը տեսնել, ընդունել և հաղթահարել հաղոր-
դակցման բարդությունները արգելակում է նրանց զարգացման գործընթացը:

Գրականություն

- 1 **Берри Дж.** Кросскультурная психология: исследования и применение / Дж. Берри, А. Пуртинга, М. Сигалл, П.Р. Дасен. – Харьков: Гуманитарный центр, 2007. – 254 с.
- 2 **Братусь Б. С.** Аномалии личности. – М.: Мысль, 1988. – 301 с.
- 3 **Вербицкий А. А., Калашников В.Г.** Категория «контекст» в психологии и педагогике. – М.: Логос, 2010. – 304 с.
- 4 **Крюкова Т. Л., Гущина Т.В.** Культура, стресс и копинг: социокультурная контекстуализация совладающего поведения. – Кострома: КГУ им. Н.А. Некрасова; КГТУ, 2015. – 236 с.
- 5 **Либин А.В.** Дифференциальная психология: на пересечении европейских, российских и американских традиций. – М.: Смысл, 1999. – 532 с.
- 6 **Марцинковская Т.Д.** Культура и субкультура в пространстве психологического хронотопа. – М.: Смысл, 2017. – 271 с.
- 7 **Мацумото Д.** Психология и культура. – СПб., 2003. – 308 с.
- 8 **Самохвалова А.Г.** Коммуникативные трудности ребенка: феноменология, факторы возникновения, динамика. – Кострома: КГУ им. Н.А. Некрасова, 2014. – 342 с.
- 9 **Самохвалова А. Г.** Ступени самовоспитания личности. – Кострома, КГУ, 2017. – 178 с.
- 10 **Триандис Г. К.** Культура и социальное поведение. – М.: Форум, 2007. – 384 с.

"КОММУНИКАТИВНЫЕ ТРУДНОСТИ РОССИЙСКИХ И АРМЯНСКИХ ПОДРОСТКОВ: СОЦИОКУЛЬТУРНЫЙ АСПЕКТ"

Аванесян Г. М., Асриян Э. В. (ЕГУ, Ереван, Армения)

*Самохвалова А. Г. (Костромской государственный университет им Н.А.
Некрасова; , Кострома, Россия)*

В статье представлены результаты кросс-культурного исследования коммуникативных трудностей подростков, проживающих в Армении и в России. В эмпирическом исследовании приняли участие подростки обоих полов в возрасте

14-15 и 16-17 лет, всего 280 человек. Результаты тестирования были обработаны по статистической формуле U-критерия Манна-Уитни.

Выявлены обще-возрастные коммуникативные трудности, характерные для подросткового этапа онтогенеза; а также социокультурные, возрастные и половые различия коммуникативных трудностей российских и армянских подростков. С учетом контекста ситуаций общения респондентов описаны трудности, возникающие в процессе коммуникаций со взрослыми и сверстниками.

Ключевые слова: *подросток, общение, коммуникативные трудности, социокультурная среда, кросскультурные различия.*

"COMMUNICATIVE DIFFICULTIES OF RUSSIAN AND ARMENIAN ADOLESCENTS: A SOCIOCULTURAL ASPECT"

*Avanesyan H.M., Asriyan E.V., (YSU, Yerevan, Armenia)
Samohvalova A.G. (Kostroma State University, Kostroma, Russia)*

The article presents the results of a cross-cultural study of the communication difficulties of adolescents from Armenia and Russia. The general age-related communication difficulties characteristic of the adolescent stage of ontogenesis were revealed; as well as the sociocultural, differences of the communicative difficulties of Russian and Armenian adolescents. In experiment they were participated 280 adults, two groups aged 14-15 and 16-17 years. The test results were processed according to the statistical formula of the Mann-Whitney U test. Being focused on the context of the situations of communication, respondents described the difficulties encountered in the process of communication with adults and peers.

Keywords: *adolescent, communication, communication difficulties, socio-cultural environment, cross-cultural differences.*